ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄՐՑՈՒՅԹ

11.11.2022 16:15

Հարգելի փաստաբաններ,

2023 թվականի համար (հունվար ամսից) նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերը (հաստիքները), այն է՝ Երևան քաղաքում քրեաիրավական մասնագիտացմամբ 6 ամբողջական հաստիք (**այսուհետ՝ Թափուր տեղեր**), համալրելու համար,

ինչպես նաև 2023 թվականի ընթացքում առաջացանալիք թափուր հաստիքները համալրելու նպատակով հանրային պաշտպանների թեկնածուների ցուցակ ձևավորելու համար՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) հայտարարում է հետևյալ մրցույթները (**այսուհետ՝ Մրցույթ**)՝

1) **քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների հնարավոր (տարվա ընթացքում առաջացող) թափուր հաստիքները համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ՝** Երևան քաղաքի Թափուր տեղերը (6 հաստիքները), ինչպես նաև Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների հնարավոր (տարվա ընթացքում առաջացող) թափուր հաստիքները համալրելու համար ։

Տեղեկացնում ենք, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-3 հասցեում (ՀՀ փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2022 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 11.00-ին:**

2) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն հայտարարության հրապարակելու օրվանից մինչև 2022 թվականի նոյեմբերի 21-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

3) Փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2022թ. նոյեմբերի 21-ից

հետո:

4) Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ:

5) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի**

Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 4.11 կետի համաձայն:

Բեռնել Դիմումը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմի ղեկավար

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })